ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» փետրվարի 2025 թ. N 16-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի N 5 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ քաղաքաշինության բնագավառում օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում (ՔՊԼ-001589) 1-ին դասի լիցենզիայի ու լիցենզիային կից շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-001589-12) գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել 6 ամիս:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

03.02.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ